

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՆԱՏՕ-Ի ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՌԱՖԱՅԵԼ ԷՍՊՐԵԼԱՅԻՆ

Մայիսի 15-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Ռաֆայել Էսպրելային:

Զրույցի ընթացքում պրն Էսպրելան Վեհափառ Հայրապետին ներկայացրեց ՆԱՏՕ-ի գործունեության գլխավոր խնդիրները՝ նշելով, որ կազմակերպությունը կողմնակից է բոլոր տեսակի տարաձայնությունների լուծմանը երկխոսության և փոխհասկացողության ճանապարհով: Պրն Էսպրելան նշեց նաև, որ ՆԱՏՕ-ն հատուկ ուշադրություն է դարձնում կովկասյան տարածաշրջանին և կարևորում տարածաշրջանային երկրների մասնակցությունը եվրոպական գործընթացներին:

Վեհափառ Հայրապետը ողջունեց Հայաստանի և ՆԱՏՕ-ի միջև վերջին տարիներին ձևավորվող համագործակցությունը՝ վստահություն հայտնելով, որ այն իր օգտակարությունը կբերի տարածաշրջանի, ինչպես նաև ողջ աշխարհի խաղաղության ամրապնդմանը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԿԱՆԱԴԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ «ԿԱՆԱԴԱ-ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Մայիսի 16-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Կանադայի խորհրդարանի «Կանադա-Հայաստան» բարեկամության խորհրդարանական խմբի անդամներին՝ Կանադայում Հայաստանի դեսպան Արա Պապյանի ուղեկցությամբ:

Վեհափառ Հայրապետը ողջունեց երկու երկրների միջև առկա բարեկամությունը՝ ընդգծելով նաև Կանադայի իշխանությունների կողմից կանադահայ համայնքի նկատմամբ ունեցած ջերմ վերաբերմունքը, ինչի ականատեսն է եղել նախորդ տարի այդ երկիր կատարած հովվապետական այցի ընթացքում: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ նշեց, որ կանադահայերը, իբրև երկրի լիիրավ քաղաքացիներ, ոչ միայն իրենց մասնակցությունն են բերում Կանադայի հասարակական-քաղաքական կյանքին, այլև Հայ Եկեղեցու շուրջ համախումբ կարողանում են կազմակերպել իրենց ազգային-եկեղեցական կյանքը:

Կանադայի խորհրդարանի անդամ, «Կանադա-Հայաստան» բարեկամության խորհրդարանական խմբի ղեկավար Սարգիս Ասատուրյանը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, ներկայացրեց հայ-կանադական հարաբերությունների զարգացման հեռանկարները: Խոսվեց նաև Կանադայի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի մասին: Ինչպես նշեցին հյուրերը, խմբի անդամները որոշակի քայլեր են ձեռնարկում այդ ուղղությամբ, և առաջիկայում մի խումբ խորհրդարանականների կողմից համապատասխան օրինագիծ կներկայացվի խորհրդարան: Վեհափառ Հայրապետը կարևոր ու էական նկատեց Հայոց ցեղասպանության ճանաչումը՝ այն անվանելով համամարդկային ողբերգություն:

Զրույցի ընթացքում, ի պատասխան հյուրերի հարցումների, Վեհափառ Հայրապետը խոսեց ետխորհրդային տարիներին Հայ Եկեղեցու գործունեության ու առկա դժվարությունների մասին, անդրադարձավ աղանդավորության տարածման խնդիրներին:

Հանդիպման ավարտին հյուրերը Վեհափառ Հայրապետին նվիրեցին Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի առիթով Կանադայում հրատարակված նամականիշի մեծադիր նկարը՝ «Կանադա-Հայաստան» խորհրդարանական խմբի անդամների ստորագրություններով:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԿՈՐԵԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Մայիսի 18-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Կորեայի նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Չոն Տե-Իկին (նստավայրը՝ Մոսկվա):

Վեհափառ Հայրապետը ողջունեց պրն Չոն Տե-Իկի դեսպան նշանակվելը Հայաստանում՝ վստահություն հայտնելով, որ նորանշանակ դեսպանի ջանքերով առավել են զարգանալու Հայաստանի անկախացումից հետո Կորեայի հետ ձևավորված հարաբերություններն ինչպես տնտեսական, այնպես էլ մշակութային ոլորտներում:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Հայ Եկեղեցու, հայոց հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 1700-ամյա պատմությանն ու

առաքելությանը: Պրն դեսպանը, կարևոր նկատելով Հայ Եկեղեցու դերը ժողովրդի կյանքում, Վեհափառ Հայրապետին ներկայացրեց նաև իր երկրի կրոնական կյանքը: Ինչպես նշեց դեսպանը, ավանդական բուդդիզմի հետևորդների կողքին Կորեայում ապրում են բազմաթիվ քրիստոնյաներ, որոնք կազմում են բնակչության շուրջ 50 տոկոսը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՀԿ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻՆ

Մայիսի 20-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Առնտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) գլխավոր տնօրեն Մայք Մուրին:

Հանդիպման ընթացքում խոսվեց տնտեսական, մշակութային և կրոնական հարցերի շուրջ: Կարևոր նկատվեց Եկեղեցու և հոգևոր առաջնորդների դերը նոր հազարամյակի առաջադրած մարտահրավերների հաղթահարման գործում:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ տեղեկացավ, որ առաջիկայում Հայաստանը կարող է դառնալ ԱՀԿ անդամ:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԵՐԳԵՅ ՄԻՐՈՆՈՎԻՆ

Մայիսի 23-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Սերգեյ Միրոնովին և նրա գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանի ուղեկցությամբ:

Վեհափառ Հայրապետը ողջունելով հյուրերին, ուրախություն հայտնեց, որ շարունակվում ու օրավուր զորանում են երկու երկրների միջև բարեկամության բարի ավանդույթներն ինչպես պետական, այնպես էլ եկեղեցական մակարդակներում՝ նշելով, որ դարավոր այդ բարեկամությանը մշտապես իր նպաստն է բերել նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Նորին Սրբությունն իր մասնավոր ուրախությունը հայտնեց Ռուս Ուղղափառ Եկեղեցու հետ առկա եղբայրական ջերմ կապերի առիթով, որի արտահայտություններից մեկը կդառնա այն նոր ռուսական եկեղեցին, որ առաջիկայում կառուցվելու է քաղաքամայր Երևանում:

«Հավատում ենք, որ եկեղեցիների օրհնությունը կարևոր է մեր երկու ժողովուրդների առաջընթացի և բարգավաճման համար և այդ գիտակցությամբ էլ փորձում ենք զորակցել մեր երկրներին»,- ասաց Հայոց Հայրապետը:

Պրն Միրոնովը ևս կարևորեց Եկեղեցիների և հոգևոր առաջնորդների դերը ժողովրդի կյանքում: Այս առիթով ռուսաստանցի հյուրն իր շնորհակալությունը հայտ-

նեց Վեհափառ Հայրապետին հայ-ռուսական բարեկամության ամրապնդմանը բերած նպաստի, ինչպես նաև խաղաղասիրական գործունեության համար: Վերջինիս առիթով պրն Միրոնովը չափազանց կարևոր նկատեց ղարաբաղյան հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելուն ուղղված Հայոց Հայրապետի ջանքերը, որին և միտված է հայ և ադրբեջանցի հոգևոր առաջնորդների միջև սկսված երկխոսությունը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ ՆԵՐՍԵՍ - ՊԵՏՐՈՍ ԺԹ-ԻՆ

Մայիսի 29-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Հայաստան-Մփյուռք» երկրորդ համաժողովի առիթով Հայաստան ժամանած Հայ Կաթողիկե Եկեղեցու Կաթողիկոս-Պատրիարք Ներսես-Պետրոս ԺԹ-ին և նրա գլխավորած պատվիրակությանը:

Ամենայն Հայոց Հայրապետն ու Հայ Կաթոլիկ Եկեղեցու պետն իրենց գոհունակությունը հայտնեցին համաժողովի գումարման առիթով՝ այն դիտարկելով իբրև աշխարհասփյուռ հայությանը հայրենիքի շուրջ համախմբելու կարևոր քայլ:

Ջրույցի ընթացքում Նորին Սրբությունը նշեց Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու հետ առկա բարեկամական կապերը՝ վստահությամբ, որ նոր հազարամյակում էկումենիկ հարաբերությունների բարի ընթացքն իր բարի արդյունքներն է բերելու: Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց նաև Մխիթարյան միաբանության հայրերի հայանպաստ գործունեությանը:

***

Նույն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՌԴ Անվտանգության խորհրդի նախագահ Վլադիմիր Ռուշայլոյին՝ ՀՀ Անվտանգության խորհրդի նախագահ, պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի ընկերակցությամբ:

Ինչպես նշեց պրն Ռուշայլոն, իր համար ավանդույթ է դարձել Հայաստան յուրաքանչյուր այցի ընթացքում այցելել նաև հայոց հոգևոր կենտրոն:

Հանդիպման ընթացքում զրուցակիցները ուրախությամբ ընդգծեցին հայ-ռուսական կապերի շարունակվող զարգացումն ու ամրապնդումը:

Հանդիպմանը ներկա էին Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանը և Հայաստանում Ռուսաստանի դեսպան Անատոլի Դրյուկովը: